ԼԱՄԲԵԹԻ ԺԱ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 13-ը Քենթրբերիի համալսարանում տեղի է ունեցել Լամբեթի ԺԱ համաժողովը՝ նախագահությամբ Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանի:

Համաժողովին մասնակցել են աշխարհի 115 տարբեր երկրներից ժամանած 425 անգլիական թեմական արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ: Համաժողովի աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել նաև շուրջ 50 խորհրդականներ և նույնքան դիտորդներ քրիստոնեական զանազան քույր եկեղեցիներից:

Հայ առաքելական եկեղեցու կողմից, որպես դիտորդ-ներկայացուցիչ, համաժողովին մասնակցել է նույնպես Անգլիայի հայրապետական պատվիրակ և հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանը:

Համաժողովում ընթերցվել են աշխատանքների համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք զեկուցումներ հետևյալ թեմաների շուրջ՝ «Հասարակության պահպանումը», «Տնտեսական գործոնները և մարդկության տենչանքները», «Եկեղեցու սպասավորների պատրաստություն»: Այս վերջին թեմայի, ինչպես նաև «Անգլիական եկեղեցին և նրա ապագան» նյութի շուրջ առանձին զեկուցումներով և ճառերով հանդես են եկել անգլիական եկեղեցու մի շարք բարձրաստիճան հոգևորականներ:

Լամբեթի համաժողովի օրակարգում դրված ամենից հրատապ հարցը եղել է կանանց ձեռնադրության հարցը, որի շուրջ ծավալվել է մտքերի աշխույժ փոխանակություն: Սույն համաժողովը, վերստին քննարկելով այդ հարցը, ընդունել է հետևյալ որոշումը. թույլ տալ անգլիական եկեղեցու թեմական առաջնորդներին, որպեսզի ամեն մեկը, ելնելով իր վիճակի առանձնահատուկ պայմաններից ու պահանջներից, ինքը որոշի կանանց քահանայական կոչում տալը կամ չտալը:

Համաժողովում թե՛ կաթոլիկ և թե՛ օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչ-դիտորդները, ինչպես նաև հայ եկեղեցու ներկայացուցիչը ջանքեր են գործադրել, որպեսզի անգլիական եկեղեցին ընդհանրապես վերացնի կանանց ձեռնադրությունը:

Օգոստոսի 1-ին Լոնդոնի Ուեստրմինստրի աբբայարանում տեղի է ունեցել երեկոյան հանդիսավոր արարողություն, որին մասնակցել են համաժողովի բոլոր պատգամավորները: Նույն օրը Բաքինգհեմի պալատում Մեծ Բրիտանիայի մայր թագուհին տվել է պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ համաժողովի բոլոր մասնակիցների:

* * *

Օգոստոսի 29-ին Թբիլիսի է այցելում, վրաց եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Իլիա Բ-ի հրավերով, Հունաստանի Աֆոնի քաղաքի նահանգապետ և Սելանիկի Արիստոտելի անվան համալսարանի պրոֆեսոր, դոկտ. Դիմիտրոս Ցասիմը:

Դոկտ. Ցասիմը սեպտեմբերի 2-ին, ուղեկցությամբ տ. Նիկոլայ եպիսկոպոսի և Վրաստանի եկեղեցական գործերի լիազոր Օնոպրիշվիլու, այցելում է Թբիլիսիի հայոց ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցի, ուր նրան ողջունում և բարի գալուստ է մաղթում վրահայոց առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Սեպտեմբերի 3-ին, հետմիջօրեի, տ. Գևորգ սրբազանը ներկա է լինում վրաց եկեղեցու կողմից ի պատիվ հույն հյուրին տրված ճաշկերույթին, ուր, հանուն Հայոց Հայրապետի, ողջունում է ներկայությունը դոկտ. Ցասիմի և շեշտում կարևորությունը հայ-հույն եկեղեցիների հարաբերությունն ու համագործակցությունը, էկումենիկ ոգով, աշխարհի խաղաղության և եկեղեցիների ի Քրիստոս եղբայրության համար:

* * *

Սեպտեմբերի 21-ին Բուլղարիայի Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Ա Պատրիարքը այցելել է Վաշինգտոն, ուր Բուլղարիայի դեսպան Կոստանդին Կրիկորոֆը, ի պատիվ Սրբազան Պատրիարքի և նրա շքախմբի անդամների, տվել է պաշտոնական ընդունելություն, որին ներկա է եղել նաև ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսի ներկայացուցիչ տ. Բաբգեն եպս. Վարժապետյանը, որը ող-

ջունել և բարի գալուստ է մաղթել Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքին:

Սրբազան Պատրիարքը իր պատասխան խոսքի մեջ անդրադարձել է Մայր Աթոռ ս. Էջմիածին կատարած իր այցելության մասին և շեշտել, որ իրեն խորապես տպավորել են Արարատ լեռը, ս. Էջմիածինը, Երևանն ու Հայոց Հայրապետ Նորին Սրբություն Վազգեն Առաջինը:

Պետք է այստեղ արձանագրել, որ տ. Բաբգեն սրբազանը Վաշինգտոնում, որպես առաջնորդի ներկայացուցիչ, սերտ հարաբերություններ է պահում քույր եկեղեցիների հետ և նրանց «տեղյակ կպահե հայ եկեղեցվո, Մայր Աթոռի և հայ ժողովրդի կյանքի և ներկայի կարևոր իրադարձությունների մասին»:

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ»-Ի ԺՈՂՈՎԸ ՇԻՈՖՈԿՈՒՄ

1978 թվականի սեպտեմբերի 26—29 օրերին Շիոֆոկում (Հունգարիա) տեղի է ունեցել «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս»-ի երրորդ խորհրդակցական ժողովը, որի թեման է եղել «Անվտանգություն, զինաթափություն և էկոնոմիկա»:

Խորհրդակցությանը մասնակցել են Եվրոպայի 20 երկրներից ժամանած քրիստոնեական տարբեր եկեղեցիների 80 ներկայացուցիչներ: Ժողովին իր մասնակցությունն է բերել նաև Դամասկոսի թեմի առաջնորդ տ. Ոսկան ծայրագույն վարդապետ Գալփաքյանը որպես հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչ վերոհիշյալ կոնֆերանսում:

Սեպտեմբերի 26-ին կայացած լիագումար նիստում կարդացվել են երեք հիմնական զեկուցումներ հետևյալ թեմաներով՝ «Սպառազինությունը», «Եվրոպայի անվտանգությունը Հելսինկիի և Բելգրադի ժողովներից հետո», «Եկեղեցիների դերը Եվրոպայի անվտանգության ամրապնդման գործում», որոնց շուրջ տեղի է ունեցել մտքերի լայն փոխանակում խորհրդակցության մասնակիցների միջև:

Այնուհետև ժողովն իր աշխատանքները շարունակել է երեք աշխատանքային խմբերում, որոնցից յուրաքանչյուրն զբաղվել է ժողովի ընդհանուր օրակարգից բխող առանձին հարցերի ուսումնասիրությամբ: Հայ եկեղեցու ներկայացուցիչը մասնակցել է երրորդ խմբի աշխատանքներին:

Սեպտեմբերի 29-ին ամփոփվել են վերոհիշյալ երեք խմբերի խորհրդակցությունների արդյունքները առանձին տեղեկագրերում, որոնց հիման վրա պատրաստվել է մի հաղորդագրություն, որը լիագումար նիստում մանրամասն քննարկման ենթարկվելուց հետո հաստատվել է խորհրդակցության մասնակիցների կողմից:

* * *

Հայոց Հայրապետի հրավերով սույն թվականի նոյեմբերի 23—24 օրերին պաշտոնական այցով Մայր Աթոռում եղավ «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի գլխավոր քարտուղար, պաստոր Լյուբոմիր Միրեյովսկին՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Նոյեմբերի 23-ին Հայոց Հայրապետը Վեհարանում ընդունեց մեծարգո հյուրին և զրույց ունեցավ նրա հետ:

Նոյեմբերի 24-ին Վեհարանում տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում ԽՔԿ-ի գլխավոր քարտուղարի և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանի, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանի և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանի միջև:

Հանդիպման ընթացքում քննության առնվեցին «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի հետ Մայր Աթոռի հարաբերությունների և գործակցության ընդլայնման հնարավորություններին վերաբերող մի շարք հարցեր:

Նույն օրը, երեկոյան, հարգելի հյուրն իր տիկնոջ հետ հրաժեշտ տվեց Մայր Աթոռին, Հայոց Հայրապետին և հաջորդ օրը, առավոտյան, մեկնեց լավագույն տպավորություններով:

Մայր Աթոռում գտնվելու օրերին պաստոր Լյուբոմիր Միրեյովսկին այցելեց Մայր տաճար, ուր ներկա եղավ երեկոյան ժամերգությանը, ծանոթացավ Վաղարշապատում գտնվող ս. Հռիփսիմե, ս. Գայանե վանքերին, ապա այցելեց Երևանի ս. Սարգիս եկեղեցի, Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ինչպես նաև Գառնիի հեթանոսական տաճար և ս. Գեղարդ վանք: